ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ (1987 Թ.)

Բուլղարիա

Սոֆիայում լույս տեսնող «Օտեչեստվեն ֆրոնտ» թերթը 1986 թ. հոկտեմբերի 8-ի համարում հրատարակել է Անկարայի իր թղթակից Դելչո Բալաբանովի «Հարուստ ժառանգության բարբարոսական ոչնչացումը» խորագիրը կրող հոդվածը, որը թարգմանաբար տպված է սփյուռքահայ մի շարք թերթերում։ Հոդվածում ի միջի այլոց ասված է. «Անվիճելի փաստեր ցույց կուտան, որ սպանդի տարիներում և համատարած ցեղասպանության ժամանակ, երիտթուրքերուն կառավարությունը կորոշե ոչնչացնել հայկական քաղաքակրթությունը ապացուցող ամեն մեկ նյութական փաստ։ Այդ քաղաքականության տրամաբանական հետևանքը հայ ժողովրդի ոչնաչնչումը և մարդկային մշակույթի ու արվեստի նվաճումներուն ոչնչացումն էր։ Քանի մը տասնյակ տարիներե ի վեր թրքական բոլոր քարտեսներեն, տեղեկատուներեն և այլ. հրատարակություններեն ի սպառ վերցված է Հայաստան անունը։ ...Երեսնական թվականներեն հայոց պատրիարքարանի տվյալներու և ՅՈՒՆԵՍԿՈ-ի ուսումնասիրություններու համաձայն Արևմտյան Հայաստանի մեջ թուրքերը գետնին հավասարեցուցած են 1036 վանքեր ու եկեղեցիներ։ ...Հուշարձանները թնդանոթի ռմբակոծումներով քանդելու առանձին դեպքեր ալ կան։ ...Սովորական երևույթ է եկեղեցիները մզկիթի, բանտի, ախոռի, պահեստանոցի կամ ռսմանյան մշակույթի «թանգարանի» վերածելը»։

«Արև», 30 հունվարի, 1987
«Էրեբունի», 2 հուլիսի 1987

Սոֆիայի «Օտեչեստվո» հրատարակչությունը «Ֆոլկլոր և ժողովրդական վիպագրություն» մատենաշարով հրատարակել է «Քաջ Նազար» խորագրով մի ժողովածու՝ նվիրված հայ բանահյուսությանն ու ժողովրդական հեքիաթներին։ Գրքում տեղ են գտել Ղազարոս Աղայանի, Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի պատմվածքներն ու հեքիաթները։ Ժողովածուն կազմել և թարգմանությունները կատարել է Հակոբ Օրմանջյանը։

«Երևան», 14 փետրվարի, 1987

Ապրիլի 26-ին Պլովդիվի քաղաքային դերեզմանատանը, հայերի ցեղասպանության զոհերի հուշարձանի մոտ տեղի է ունեցել սգո միտինգ, որին մասնակցել են Հայրենական ճակատի համայնքային կոմիտեի քարտուղարներ Սրտոյան Ստոյչեւը և Մարիա Վանկելովան, «Երևան» կազմակերպության Պլովդիվի վարչության անդամները, հարյուրավոր մարդիկ։ Միտինգը բացել է «Երևանի» տեղական վարչության նախագահ Կարո Քափուլյանը։ «Օրվա բանախոս Ստ. Ստոյչեւը,—կարդում ենք «Երևանում»,— նշեց, թե հայերու միակ հանցանքը ազատության և ինքնավարության տենչն էր։ «Երբեք չըպետք է մոռանանք պատմության դաժան դասերը, այլ պայքարինք, որպեսզի չկրկնվին 1915-ի կոտորածները։ Խոր հարգանքի խոնարհում ազատասեր և քաջարի հայ ժողովուրդի տառապանքներուն առջև» եզրակացուց ան իր ելույթը»։ Կարդացվել է ՄԱԿ-ին ուղղված հեռագիր, որն արտահայտում է ժողովրդի բողոքը ներկա թուրք կառավարության մարդատյաց քաղաքականության դեմ և բուլղարահայերի անկեղծ փափագը աշխարհում խաղաղություն և անվտանգություն պահպանելու համար։

Նույնանման սգո միտինգներ են տեղի ունեցել նաև Վառնա, Բուրգաս, Շումեն, Խասկովո և այլ քաղաքներում։

«Երևան», 5, 9 մայիսի, 1987

Նոյեմբերի 28-ին Սոֆիայի հասարակայնությունը նշել է Հոկտեմբերյան հեղափոխության 70-ամյակը և Հայաստանում սովետական կարգերի հաստատման 67-րդ տարեդարձը։ Տրվել է ճոխ համերգ։ Նույնանման հանդիսություններ են տեղի ունեցել Պլովդիվում, Բուրգասում, Խասկովոյում, Ստարա Զագորայում։ Բազարջիկում

Բուլղարա-սովետական բարեկամության Համայնքային կոմիտեի և «Երևանի» Բազարջիկի վարչության նախաձեռնությամբ նոյեմբերի 22-ին նույնպես տեղի է ունեցել հանդիսություն նվիրված Մեծ Հոկտեմբերի 70-ամյակին, որին ներկա է եղել նաև Բուլղարա-սովետական բարեկամության Համայնքային կոմիտեի նախագահ Լազարինա Վելինովան, Նենկա Էմիլյարովան։ Զեկուցումով հանդես է եկել Լ. Վելինովան։ Հանդիսությունը ունեցել է գրական-գեղարվեստական բաժին, ցուցադրվել է «Սովետական Հայաստան» վավերագրական ֆիլմը։

«Երևան», 28 նոյեմբերի, 1987
5 դեկտեմբերի, 1987

Սոֆիայում բացվել է օսմանյան պետության մեջ և արդի Թուրքիայում կատարվող ահավոր ոճիրները մերկացնող ցուցահանդես, որի նպատակին, ինչպես հայտնում է «Երևանը», գրված է՝ «Վավերագրական պատում ցեղասպանության մասին, որուն ենթարկված էին ոչ թուրք ազգերը Օսմանյան կայսրության և արդի Թուրքիայի մեջ»։ Լուսանկարները, գծագրությունները, բացատրությունները և այլ վավերագրական նյութեր առնված են թուրքական ու եվրոպական աղբյուրներից։ «Ցեղասպանությունը սիստեմատիկորեն գործադրված է իբրև պետական քաղաքականություն սուլթանական կառավարություններեն 5 դարերու ընթացքին, օսմանյան պետության նվաճած ոչ թուրք ազգերուն՝ սլավոններուն, հույներուն, հայերուն, ռումինացիներուն, պարսիկներուն, քրդերուն, չերքեզներուն, լազերուն և այլոց հանդեպ»։ Ցուցահանդեսը բացվել է նոյեմբերի 20-ին, ներկա են եղել անվանի քաղաքական ու հասարակական գործիչներ, լրագրողներ, ինչպես նաև «Երևան» կազմակերպության կենտրոնական վարչության նախագահը և անդամները։

«Երևան», 28 նոյեմբերի, 1987

Ռումինիա

Բուխարեստում կատարվել է Հայ մշակութային տան թանգարանի վերաբացումը։ Թանգարանում հավաքված են հայկական մշակույթի շատ արժեքներ։ Ռումինական պաշտոնական մի շարք անձինք, այցելելով նորաբաց թանգարանը, գրել են. «Ջնայած հայ համայնքի թիվը փոքր է Ռումանիո մեջ, սակայն իր հնությամբ, պատմությամբ, մշակույթով և բարձր ճաշակով կգերազանցե բոլոր մյուս փոքրամասնություններին»։ Թանգարանի և գրադարանի բացումը օրհնել է Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Առաջինը։

«Նոր աշխարհ», 23 հունիսի, 1987

Սիրիա

Հալեպի «Աղ Տաղ» ամսագրի 1986 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսների միացյալ համարը նվիրված է հայ ժողովրդին։ Առաջին հոդվածի հեղինակ, «Աղ Տաղի» խմբագիր Արդալլահ Յորկի Հալլաքի «Մեր եղբայր հայերը» հոդվածում խոսվում է հայ ժողովրդի պատմության մի շարք հարցերի մասին։ Երկրորդ հոդվածը նվիրված է հայ գրականությանը (հեղինակը Ռիադ Արդալլահ Հալլաք), անդրադառնում է նաև 1915-ին զոհ դարձած հայ գրողներին։ Հրապարակված է սովետահայ արևելագետ Նիկոլայ Հովհաննիսյանի «Հայ-արաբ փոխհարաբերությունները» հոդվածը։

«Զարթոնք», 8 մայիսի, 1987

Հալեպում, դեկտեմբերի 2-ին Տիգրանի ուսանողական-երիտասարդական միության նախաձեռնությամբ արժանավայել ձևով նշվել է նոյեմբերի 29-ը, վերածնված հայրենիքի սովետականացման 67-րդ տարեդարձը։ Գեղարվեստական ճոխ ծրագրով տոնակատարությանը մասնակցել են հայրենիքից ժամանած հյուրերը։

«Արարատ», 24 դեկտեմբերի, 1987

Լիբանան

«Ազգային մշակույթը» հայտնում է. «Աշխարհի ազատատենչ խաղաղասեր, առաջավոր մարդկության հետ զուգահեռ Լիբանանը ևս ժողովրդական լայն զանգվածներու ու առաջադեմ հայրենասեր բոլոր ուժերու մասնակցությամբ լայն ծրագրով մը նշեց և տակավին կնշե Հոկտեմբերյան մեծ հեղափոխության հաղթանակի 70-ամյակը»։ Հոբելյանի առթիվ Լիբանանի կոմկուսի Կենտկոմը հայտարարություն է հրապարակել, որը տպված է «Ազգային մշակույթում»։

«Ազգային մշակույթ»,
15, 29 նոյեմբերի, 1987

Թեքեյան մշակութային միության Բեյրութի վարչությունը նոյեմբերի 15-ին կազմակերպել է հանդիսություն՝ նվիրված Եղիշե Չարենցի ծննդյան 90-ամյակին։ Վարչության ատենապետ Հ. Թապագյանը Դամասկոսի վարչության ատենապետ, գրող Հ. Մարտիրոսյանը, արձակագիր Ա. Սեպետճյանը զեկուցումներ են կարդացել մեծ բանաստեղծի կենսագրության, նրա վերջին

և անտիպ գործերի հրատարակությունների մասին։ Տրվել է համերգ։

«Զարթոնք», 28 նոյեմբերի, 1987

Իրան

Թեհրանում մի խումբ հայ գրողներ հիմնել են Թեհրանահայ գրական շրջանակ։ Հիմնադիրներն են Գալուստ Խաչենցը, Հովիկ Էգգարյանը, Խաչիկ Գալստյանը, Ռուբինա Բարսեղյանը և ուրիշներ։ Նպատակն է քաջալերել իրանահայ գրողներին՝ կազմակերպելով հավաքույթներ և կատարելով հրատարակություններ, ինչպես նաև փոխադարձ կապեր ստեղծել գրական այլ շրջանակների հետ։

«Արև», 8 մայիսի, 1987
«Ազգային մշակույթ», 12 հուլիսի, 1987

Իրանահայ գաղութում սկսել են լույս տեսնել գրական-մշակութային բնույթի երկու նոր ամսաթերթեր՝ «Միածնում» և «Արաքս» անուններով։ Երկու թերթերն էլ ունեն հայրենասիրական ազատագրական ուղղություն։

«Շարժում», 5 օգոստոսի, 1987

Թուրքիա

«Ջումհուրիեթ» թերթը իր մարզական հավելվածում տվել է պատկերազարդ մի հոդված Կեսարիո հայոց Ս. Աստվածածին եկեղեցու այժմյան վիճակի մասին, գրելով որ 150 տարվա պատմական աղոթավայրը օգտագործվում է մարզական միության կողմից։ Թերթը այս առթիվ գրել է, թե մշակույթի և զբոսաշրջության գործավարությունը ինչպե՞ս է թույլատրել նման շենքի օգտագործումը այսպիսի նպատակների համար. «Նորոգության անունին տակ ալ կարգ մը փոփոխություններ կատարվեցան շենքին մեջ, ուր պատմական հնություն ունեցող և արժեք ներկայացնող ամեն ինչ սկսավ անհետանալ ու քանդվել և ի վերջո մարզասրահի մը վերածվեցավ»։

«Արարատ», 19 մարտի, 1987

Թրքական «Իքիպինե Տողրու» շաբաթաթերթը իր համարներից մեկում հոդված է նվիրել քանդվող հայկական եկեղեցիներին և հուշարձաններին։ «Հայերո՞ւ կպատկանի, փլցուցեք ուրեմն» խորագրի տակ թերթի խմբագրությունը նշում է, որ XVI դարի կրթական և ուսման կենտրոն Յոթ եկեղեցիները և Վարագի վանքը այժմ ավերակ են և այլ նպատակների են ծառայում։ «Վանի Շատախ շրջանի այս եկեղեցիները միտումնավոր քանդումի հետևանքով երկրագունտին վրայեն սրբվելու վրա են. Գայլրթի եկեղեցին քարակույտ մը դարձած է, էլմաճը գյուղի եկեղեցին աղբանոց դարձած է, Շատախ առուի Թաշքեռվրյու կամուրջի վրայի հայերեն գիրերը սրբված են Պատմական հնություններու պաշտպան կոմիտեի կողմե»։

«Արև», 2 սեպտեմբերի, 1987

Ֆրանսիացի զբոսաշրջիկների ղեկավար Միշել Կարամինոն ձերբակալվել է Թուրքիայում, ամբաստանվելով այն բանում, որ հունիսի 18-ին ֆրանսիացի զբոսաշրջիկներին հայտարարել է, թե «...Անին և Աղթամարը հայկական հուշարձաններ են»։ Կարամինոյին ազատ արձակելու համար միջամտել է անգամ Եվրոպական խորհրդարանը։ Նա Ուրֆայի ու Դիարբեքիրի բանտերում շորս ամսվա բանտարկությունից հետո ազատ է արձակվել։ Թուրք դատախազը պահանջելիս է եղել 3—10 տարվա բանտարկություն։ Այս տեղեկությունները հայկական թերթերը քաղել են Բուրքական «Ջումհուրիեթ» թերթում տպագրած մի հոդվածից, որի հեղինակն է Յալչին Փեքշենեն։

«Մասիս», 24 հոկտեմբերի, 1987
«Զարթոնք», 3 նոյեմբերի, 1987
«Պայքար», 14 նոյեմբերի, 1987

Հենվելով Կ. Պոլսում հրապարակվող «Մարմարա» թերթի տված տեղեկությունների վրա, «Լրաբերը» հայտնում է, որ Թուրքիայի կոմունիստական կուսակցությունը և Թուրքիայի բանվորական կուսակցությունը, որոնք օրենքից դուրս են հայտարարված իրենց երկրում, միացել են նոր անունով և Բրյուսելում հրատարակել են մի հաղորդագրություն, որով պարզաբանում են մի շարք հարցերի վերաբերյալ իրենց տեսակետները։ Այդ հարցերն են. Բուլղարիայի Թուրքերի վիճակը, քրդական հարցը և հայկական ցեղասպանությունը։ «Հայկական հարցին կապակցությամբ նորակազմ կուսակցությունը,— գրում է «Լրաբերը»,—կընդունե, որ ցեղասպանությունը պատմական իրողություն է։ Բայց Հայկական հարցը որպես ազգային հարց չընդունվիր և ուրեմն, նորակազմ կուսակցությունը ոչնոր տեղ չէ տված իր ազգային քաղաքականության ուղեգծին մեջ»։

«Լրաբեր», 14 նոյեմբերի, 1987

Եգիպտոս

Կահիրեում, նոյեմբերի 28-ին, Հայ գեղարվեստասիրաց միության նախաձեռնությամբ հանդիսավորությամբ նշվել է Սովետական Հայաստանի 67-րդ տարեդարձը։ Միության ատենապետ է. Ավագյանը բացման խոսքում ասել է. «67 տարիներե ի վեր հայ ժողովուրդը կապրի անոտնձգելի սահմաններու մեջ»։ Ելույթներ են ունեցել Վ. Տեփոյանը, Է. Հակոբյանը, սովետական «Տրուդ» թերթի թղթակից Զ. Նալբանդյանը և ուրիշներ։

«Արև», 30 նոյեմբերի, 1 դեկտեմբերի, 1987

Դանիա

Բնյութաբանակ Կյուլպենկ Կիրակոսյանը Դանիայի Ազգային թանգարանին է նվիրել հին հայկական ութ դրամներ ի նշան շնորհակալության առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ հայ որբուկներին օգնելու համար։

Դրամներից մեկը պատկանում է Կիլիկիայի հայոց առաջին թագավոր Լևոնին։ Դանիայի թանգարանում պահվում են մոտ 125 հայկական դրամներ։

«Զարթոնք», 2 օգոստոսի, 1987

Շվեդիա

Շվեդիայի հայերի թիվը մոտ երկու հազար է, մեծ մասամբ արհեստավորներ են, որոշ թվով ուսանողներ և մասնագետ շրջանավարտներ։ Տեղական հայկական վարժարաններում թույլատրված է հայերեն լեզվի դասավանդություն շաբաթական երեք ժամ, որի ծախսերը հոգալու է պետությունը։ Ստոկհոլմում գոյություն ունեն երկու միություններ՝ «Ստոկհոլմի հայ մշակութային միությունը» և «Հայ-շվեդական մշակութային կենտրոնը», որն ունի իր ակումբը։ Միությունն ունի իր ամսագիրը, որ կոչվում է «Բալենի»։ Ապրիլի 24-ի հիշատակի օրը կատարում են շվեդացի հայասեր Ալմա Յոհանսենի գերեզմանի մոտ, որ 1915-ին եղել է Արևմտյան Հայաստանում և հավաքելով հայ որբերին տեղափոխել է նրանց Թեսալոնիկ և նրանց մասին հոգացել է ընդհուպ մինչև 1926 թ.։ Միությունն ունի նաև «Սայաթ-Նովա» անունով երգչախումբ։ Ուփսալայում նույնպես կա հայկական գաղթօջախ, որը ևս ունի հայ մշակույթի միություն, հիմնված 1980-ին։ Միության կից գործում է «Կոմիտաս» երգչախումբը։ Կազմակերպված են հայոց լեզվի դասընթացներ։ Մալմո քաղաքում ևս կա փոքրաթիվ հայկական գաղութ։

Շվեդահայ գաղութը սերտ կապեր է պահպանում սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի հետ, որի միջոցով ստանում է հայրենի թերթերն ու ամսագրերը, ինչպես նաև սփյուռքահայ դպրոցների համար հատուկ հրատարակած դասագրքեր։ Շվեդահայ գաղութը ամեն տարի աշակերտներ և ուսուցիչներ է ուղարկում Հայաստան՝ կատարելագործման և ամառային ճամբարներում հանգստանալու։

«Նոր աշխարհ», 26 մայիսի, 1987

Ավստրիա

1987 թ. մայիսի 9—11-ը Հայկական համագործակցության միության Ավստրիայի մասնաճյուղը և Արևմտյան Բեռլինում գտնվող հայկական տեղեկատվության և փաստագրության կենտրոնը հրավիրել են համագումար՝ քննելու համար Թուրքիայի ազգային քաղաքականությունը։ Համագումարի շարժառիթն է եղել Հելսինկիի համաձայնությանը նվիրված հերթական հանդիպումը։ Նիստերին մասնակցել են 100-ից ավելի անձինք, ներկա են եղել թղթակիցներ Գերմանիայից, Շվեյցարիայից, Ավստրիայից, Հունաստանից, Կիպրոսից, Բուլղարիայից և մարդկային իրավունքների պաշտպանության զանազան ազգերի կազմակերպությունների ներկայացուցիչներ, որոնք կարդացել են ութ զեկուցում իրենց ազգերի վիճակի մասին Թուրքիայում։ Կիպրոսի փոխ-ընդհանուր դատախազ պ. Լուկիս Լուկայդիսը փաստերով ներկայացրել է այն իրողությունը, որ Թուրքիան իր սահմանների մեջ շարունակում է հալածել ոչ թուրք ազգություններին՝ տեղի են ունենում ճարտարապետական կոթողների ոչնչացում, մշակութային արժեքների հափշտակում, եկեղեցիների վերածումը մզկիթների և այլն։

Դոկտ. Կոստանդինոս Ֆոթիատիսը իր զեկուցման մեջ նշում է, որ հայերը և հույները կազմել են երբեմնի փոքրասիական ամենամեծ թվաքանակ ունեցող քրիստոնյա ժողովուրդներ, իսկ այժմ 1915—22-ի կոտորածներից հետո կազմում են աննշան փոքրամասնություն և ապրում են հիմնականում Կ. Պոլսում։ Հայերի թիվը այսօր կազմում է 60 000, հույներինը՝ 3500 և Սև ծովի ափին՝ բռնի իսլամացած կամ գաղտնի քրիստոնյա հույներ՝ 400 000։ Արևմտյան Հայաստանի հուշարձանները պայթեցվում կամ վեր են ածվում գոմի, մզկիթի, անգամ զուգարանի։ Հայ երիտասարդները զինվորական ծառայության ժամանակ ենթարկվում են տանջանքների։ Արևմտյան Հայաստանում վերապրող հայերի նկատմամբ կիրառվում է բռնի իսլամացման քաղաքականություն։ Փոքր Ասիայում քանակապես

ամենից շատ քրդերն են, որոնց թիվը մոտ 12 միլիոն է։ Նրանց նկատմամբ ևս Թուրքական կառավարությունը վարում է բռնի թրքացման քաղաքականություն։ Ազգային փոքրամասնությունների իրավունքների կազմակերպությունների ներկայացուցիչներից կազմվել է Ատյան, որը պահանջել է, որ Թուրքիան չընդունվի Եվրոհամայնքի անդամ, քանի որ նա արհամարհում է եվրոպական քաղաքակրթության սկզբունքները։

Հայերի կապակցությամբ Ատյանը նշել է, որ. ա) Հայկական եկեղեցին ու կրոնական հուշարձանները սրբապղծվում և ոչնչացվում են։ բ) Թուրքիան հայերի դեմ գործադրած ցեղասպանությունն ուրանում է։ գ) Լոզանի 1923-ի հաշտության պայմանագրի փոքրամասնության հովանավորության պայմանները Կ. Պոլսի հայ փոքրամասնությունների նկատմամբ հետևողականորեն արհամարհվում են, և հայերեն դասավանդումը Կ. Պոլսի սակավաթիվ հայկական դպրոցներում սահմանափակված է շաբաթական չորս ժամով, դ) Արևմտյան Հայաստանում վերապրող հայերը ենթակա են բռնի իսլամացման քաղաքականության։

«Էրեբունի», 2 հուլիսի, 1987
«Զարթոնք», 22 հուլիսի, 1987

Անգլիա

Լոնդոնում լույս է տեսել «Արևելյան Թուրքիա ճարտարապետական և հնագիտական հուշարձանները» գիրքը երեք հատորով։ Առաջին հատորը բաղկացած է. ներածությունից, Ուրարտուին և Վասպուրականի, Վանի, Կարսի և Արարատի շրջանների պատմաճարտարապետական հուշարձաններին նվիրված բաժիններից. ունի 590 էջ, 105 նկարներ։ Երկրորդ՝ 478 էջ և 158 նկար ունեցող հատորը պարունակում է նյութեր նվիրված վրացական եկեղեցիներին, Պոնտոսի, Էրզրումի, Սվազի, Անտի-Տավրոսի և Վերին Եփրատի շրջաններին։ Երրորդ հատորը նվիրված է վերին և ստորին Եփրատի, Տիգրիսի, Կոմմագենեի, Եդեսիայի և Ալեքսանդրետի շրջաններին։ Այս հատորն ունի 464 էջ, 52 նկար։ Գրքում տեղ են գտել 164 քարտեզներ և հատակագծեր։

«Զարթոնք», 22 հուլիսի, 1987

Ֆրանսիա

Ֆրանսիական «Մոնդ» օրաթերթում ծավալուն հոդված է լույս տեսել, նվիրված Մեծ եղեռնին։ Հոդվածագիրը ներկայացրել է վերջերս Ֆրանսիայում լույս տեսած երեք գրքերը. «Բրիտանական կառավարության Կապույտ գիրքը», Առնոլդ Թոյնբիի «Հայոց ջարդերը» և Յոհաննես Լեփսիուսի «Գաղտնի տեղեկագրեր Հայաստանի կոտորածների մասին»։

«Արև», 12 հունիսի, 1987

Ապրիլի 12-ին Մարսելի Հայ մշակույթի տանը նշվել է Վասպուրականի հերոսամարտի 72-րդ տարեդարձը և Խրիմյան Հայրիկի մահվան 50-ամյակը։ Որոշվել է հիմնել «Խրիմյան հիմնադրամ ֆոնդ» կրթական նպատակների համար։

«Զարթոնք», 20 հունիսի, 1987

1987 թ. հունիսի 18-ին Ստրասբուրգում Եվրոպառլամենտի նիստում ձայների մեծամասնությամբ ընդունվել է հայկական ցեղասպանության մասին բանաձևը։ Ֆրանսիայի մամուլը և ռադիոկայանները անմիջապես հայտնել են երկու տարվա ձգձգումից հետո ընդունված այդ բանաձևը։ Մոտ երկու հազար հայեր հավաքվել են Ստրասբուրգի խորհրդարանի առջև և մեծ խանդավառությամբ դիմավորել են այդ որոշումը, երգելով «Մարսելյազ»։

«Արարատի» հուլիսի 10-ի համարում հրապարակված է Եվրոպառլամենտի բանաձևը Հայկական հարցի մասին։ Սփյուռքի բոլոր թերթերը տպել են այս հաղորդագրությունը։

«Զարթոնք», 20 հունիսի, 1987
«Նոր աշխարհ», 23 հունիսի, 1987
«Արարատ», 7, 10, 28 հուլիսի, 1987

Լիոնի արվարձան Վիերբանի փողոցներից մեկը կոչվել է Հայաստանի անունով. բացման արարողությանը ելույթ է ունեցել քաղաքագլուխ Շառլ Էոնիուն, որն ասել է, որ Վիերբանում ապրում են 3800 հայեր, իսկ Ֆրանսիայի Հայկական համայնքը կազմում է 400 000 մարդ։ Նա նշել է «հայ ժողովրդի գործունեությունն ու դինամիզմը, որոնք նա քաղում է իր հին ու հարուստ պատմությունից»։ Հայաստանի տեղանուններով և նշանավոր հայերի անուններով փողոցներ կան Ֆրանսիայի շատ քաղաքներում։

«Ազգային մշակույթ», 21 հունիսի, 1987
«Երևան», 4 հուլիսի, 1987

«Սարդարապատում» տպված մի հաղորդումից տեղեկանում ենք. «Եվրոպական Խորհրդարանը, ճանչցավ Հայկական ցեղասպանության իրողությունը։ Հինգշաբթի, 18 հունիսին Ստրասբուրգի մեջ գումարված ժողովին, ընդունված բանաձևի մեջ վերահաստատելով ցեղասպանություն բառը, շնորհիվ գլխավորարար-

ընկերվարական և համայնավար երեսփոխանները։

Հայկական օրակարգը ժողովի եկավ հետմիջօրեի ժամը 4. 30-ին, և անոր քննարկության արամադրվեցավ մեկուկես ժամ, որի ընթացքին 15 երեսփոխաններ ելան ու դեմ արտահայտվեցան։ Խորհրդարանին աջակողմյան մեր, որ կներկայացվի ազատական խումբին, պահպանողականներն ե եվրոպական ժողովրդային կուսակցությունն հակառակեցան հայկական բանաձևին քննարկության, առարկելով, որ իրենց իրավասությունն և ձեռնահասությունն դուրս կմնար նման քաղաքական հարցը։ Այսուհանդերձ, երեկոյան ժամը 7-ին Հայկական հարցը քննարկության ելվեցավ 72 տարբեր բանաձևերով, որոնք մեկ առ մեկ քվեարկվեցան, երբեմն փոփոխություններ կրելով։ Վերջապես ընդունվեցավ այն բանաձևը, ուր Հայկական ցեղասպանությունը կճանչվեր...

Թուրքիա Ստրասբուրգ առաքած էր պատվիրակություն մը, բաղկացած չորս երեսփոխաններեն։ որոնք հինգշաբթի, մամուլի ասուլիս մը ալ սարքեցին հայտարարելով, որ հայկական ընդունված բանաձևը կհիմնվեր «պատմական զեղծումներու և ենթափոխության վրա», և որ այս քվեարկությունը ետ հրապարակ պիտի հաներ «հայկական անարդարանալի ահաբեկչությունը, որ արդեն Բուրք երեսուն դիվանագետներու մահվան պատճառ դարձած է»։

Վավերացումեն ետք շատ հուզիչ տեսարաններ պարզված են խորհրդարանի շենքի առջև, ուր Եվրոպական զանազան երկրներու՝ Անգլիա, Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիքա, Հունաստան, Եկած շուրջ երկու հազար հայեր կսպասեին քվեարկության արդյունքին, արդարություն պահանջող պաստառներ կրելով։ Ընկերվարական մի շարք. երեսփոխաններ, որոնք գործոն դեր մը ունեցած էին Հայկական հարցին հետապնդման մեջ, դուրսը խոսք առած էին հայ ներկայացուցիչներու հետ, իսկ ժողովուրդը երգած է ֆրանսիական քայլերգը՝ Լա Մարսելյեզը և այլ ազգային երգեր»։

«Սարդարապատ», 8 նուլիսի, 1987

Փարիզում գործում է Հայկական վավերագրական կենտրոն, որի աշխատակից տիկ. Է. Գոչունյանը «Զարթոնքի» թղթակցին հայտնել է, որ Կենտրոնը բացվել է 1983-ին, ունի պատմության, ազգագրության, երաժշտության բաժիններ, 1500 անուն գրքով հայագիտական գրականության գրադարան, 12 000 ճարտարապետական նկարների միկրոժապավեններ և 15 000 մանրանկարների դիապոզիտիվներ, նկարների և թերթերի հավաքածուներ։ 1985 թ. լույս է ընծայվում մշակութային պարբերաթերթ՝ «Անի» և «Քայլ ի Արմենիեն»։

«Զարթոնք», 15 նուլիսի, 1987

Փարիզի «Աշխարհ» թերթի հուլիսի 15-ի համարը ամբողջովին նվիրված է Եղիշե Զարենցի ծննդյան 90-ամյակին։

«Աշխարհ», 18 նուլիսի, 1987

«Արև» թերթը հայտնում է. ֆրանսիական «Ժեոն» հայտնի աշխարհագրական ամսագրում լույս է տեսել «Հիշատակարան բնաջնջած երկրի մասին» հոդվածը, որի հեղինակ Կլոդ Մուտաֆյանը, շրջելով Արևմտյան Հայաստանում, Կիլիկիայում, Թուրքիայի տարածքում իր տպավորություններն է հաղորդում ընթերցողին։ Հեղինակը տալիս է նաև հայ ժողովրդի պատմությունը հին ժամանակներից մինչև այսօր, մանրամասն անդրադառնալով դարասկզբի ողբերգական իրադարձությանը՝ 1915 թ. արևմտահայության ցեղասպանությանը, ինչպես նաև նկարագրում է այդ տարածքների ներկա վիճակը։ «Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին երեք միլիոնից ավելի հայ կար Թուրքիայում։ Այսօր Պոլսում՝ արևմտահայության մշակութային ավանդական կենտրոնում մնացել են հազիվ 50 հազար, իսկ Արևմտյան Հայաստանում ինքնությամբ հայ գրեթե չկա։ Ընթացքում է մի նոր եղեռն հայ մշակութային կոթողների՝ ամրոցների, վանքերի, եկեղեցիների դեմ։ ...Անիի հյուսիսում գտնվող 10-րդ դ. կաթողիկոսանիստ կենտրոն Արգինայի 60-ական թթ. դեռևս կանգուն եկեղեցին 1977-ին պարզապես մի քարակույտի էր վերածվել։ ...Այլևս չկան Խծկոնքի եկեղեցիները... Ներկայումս Վանից մնացել են սոսկ քարակույտեր։ Կարծես թե քաղաքը քանդված է հազարավոր բուլդոզերներով։ ...Կիլիկիայի տարածքում դրությունը նույնն է»։

«Արև», 5 սեպտեմբերի, 1987

Փարիզում, նոյեմբերի 28-ին, Հ. Բ. Ը. Մ. Այնք Մանուկյան Մշակութային սրահում հանդիսավորությամբ և ճոխ համերգային ծրագրով նշվել է Սովետական Հայաստանի 67-րդ տարեդարձը։ Ելույթ են ունեցել ֆրանս-սովետական ընկերության անդամ, երեկույթի նախագահ Շառլ Լաթիլին, Մ. Գաշքաշյանը, Փ. Աղատիկյանը, Սովետական Միության դեսպանատան ներկայացուցիչ Վ. Կոզիրևը, ինչպես նաև որպես հյուր Փարիզում գտնվող ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ Հ. Սիմոնյանը։ Համերգին մասնակցել է նաև հայրենիքից ժամանած «Տաղարան» խումբը։

«Աշխարհ», 12 դեկտեմբերի, 1987

Արևմտյան Բեռլին

Արևմտյան Բեռլինում ստեղծվել է Հայկական տեղեկատվության և փաստագրության կենտրոն, որի նպատակն է հավաքել փաստագրական նյութեր, կապված հայ ժողովրդի պատմության, ցեղասպանության հետ և դրանք հայտնի դարձնել համաշխարհային հասարակայնությանը, ինչպես նաև օժանդակել մասնագետներին։ Ինչպես հայտնում է «Երևանը», կենտրոնն իր տրամադրության տակ ունի 1894—1922 թթ. հայերի դեմ գործած հալածանքների վերաբերյալ փաստագրական հավաքածու, 1915—16 թթ. Մեծ եղեռնից մոտ 200 լուսանկարներ և վավերական նյութեր հայ ժողովրդի պատմության, մշակույթի, ազգագրության, ճարտարապետական կոթողների վերաբերյալ, ինչպես նաև տարբեր լեզուներով դրականություն հայերի մասին։ Կենտրոնի գլխավոր կազմակերպիչներից են Ժիրայր Քոչարյանը, Թևսա Հոֆմանը։

«Երևան», 7 փետրվարի, 1987

ԳՖՀ

Ֆեդերալ Գերմանիայի հայկական երեք կազմակերպությունների՝ Հայկական համաշխարհային համագումարի Գերմանիայի մասնաճյուղի, գերմանախոս երկրների Հայ միությունների կենտրոնական կազմակերպության և Գերմանիայի հայ Առաքելական եկեղեցիների կենտրոնական խորհրդի նախաձեռնությամբ ապրիլի 25-ին տեղի է ունեցել Ապրիլյան ցեղասպանության 72-րդ տարելիցի նշումը։ Բեռլինի Հայ Առաքելական համայնքը ապրիլի 22-ին կազմակերպել է հուշ-երեկո՝ նվիրված մեծ մարդասեր Արմին Վեգներին, որը որպես ականատես փաստագրական հոդվածներով ու նկարներով մարդկությանը տեղեկացրել է հայկական ցեղասպանության մասին։

«Զարթոնք», 3 մայիսի, 1987

Շտուտգարդում 1987 թ. ապրիլի 26-ին Գերմանիայում կատարվել է հայոց Մեծ եղեռնի առաջին հուշարձանի բացումը, որի վրա հայերեն և գերմաներեն գրված է. «Ի հիշատակ Հայոց Մեծ եղեռնի զոհերուն»։ Ապրիլի 26-ին մոտ 300 հայեր ու գերմանացիներ և բարձրաստիճան գործիչներ մասնակցել են հուշարձանի բացման արարողությանը։ Հուշարձանին դրվել են ծաղկեպսակներ։ Այնուհետև եկեղեցում կատարվել է հոգեհանգստյան պատարագ և ապա սրահում կարդացվել է դասախոսություն։ Գերմանիայի շատ օրաթերթեր հաղորդել են այս լուրը և նյութեր են տպել հայոց պատմության ու հայերի մասին։ Ռադիոկայանը հատուկ հաղորդումներ է տվել։ Այս ամենը իրականացնելու համար երկու տարի մեծ ջանք է թափել Բադեն-Վյուրտեմբերգ նահանգի Հայ առաքելական կեդրոն. եկեղեցական խորհրդի նախագահ Գրիգոր Մինասյանը։

«Երևան», 4 հուլիսի 1987
«Սարդարապատ», 8 հուլիսի, 1987

Իտալիա

Վենետիկի համալսարանում կազմակերպվել է հայերեն լեզվի և մշակույթի ամառային դասընթաց, որը տևել է օգոստոսի 3-ից 26-ը. Դասընթացին մասնակցում են 60 հոգի՝ Իտալիայից, Ֆրանսիայից, Սիրիայից, ԳՖՀ-ից, ԱՄՆ-ից, Կանադայից, Պոլսից, Հունաստանից, Իրաքից, Լեհաստանից և Շվեյցարիայից։ Մասնակիցների մեջ կան նաև օտարազգիներ։ Դասընթացը կազմակերպել է Լևոն Էրդ. Զեքիյանը, որը և գրաբար է դասավանդում։ Դասընթացից բացի տեղի են ունեցել նաև մի շարք դասախոսություններ նվիրված հայ միջնադարյան գրականությանը, շարականներին, ձեռագրագիտությանը և այլն։

«Շարժում», 23 սեպտեմբերի, 1987

Լույս է տեսել Վահան Տերյանի բանաստեղծությունների ժողովածուն, ուր տեղ են գտել բանաստեղծի մի շարք ստեղծագործությունների հայերեն բնագրերը և նրանց իտալերեն թարգմանությունները։ Գրքում զետեղված է նաև Տերյանի կենսագրությունը իտալերեն լեզվով, որի հեղինակն է Պ. Մշազյանը։ Ժողովածուն հրատարակվել է Հ. Բ. Ը. Մ. նախաձեռնությամբ, Միության 80-րդ տարեդարձի առթիվ։ Մինչ այդ Սվազյանը նմանօրինակ մի հատոր է հրատարակել Հովհաննես Թումանյանի մասին։

«Արարատ», 11 հոկտեմբերի, 1987

Պորտուգալիա

Լույս է տեսել պատմաբան, Պորտուգալիայի պատմության ակադեմիայի թղթակից անդամ Ռոպեր Կյուլպենկյանի «Հայ-պորտուգալական հարաբերություններ» գիրքը, որում պատմագիտական վերջին տվյալների լույսի տակ ուսումնասիրված են հայ-պորտուգալական և խպանական հարաբերությունները։ Գիրքը պարունակում է 21 գիտական բանասիրական հոդվածներ, որոնցում արծարծվում են քաղաքական, դիվանագիտական, առևտրական ու կրոնական հարցեր առնչված Հայաստանի և Ռուսաստանի, Պարսկաստանի, Ջուղայի, Թուրքիայի հայ գաղթ-

«օջախների հետ, որտեղ հայ վաճառականները և հոգևորականները իրենց գործի բերումով կապեր են հաստատել և կարևոր դեր են խաղացել այդ կապերի խորացման գործում։ Գիրքը ակնառու ներդրում է սփյուռքահայ գաղթօջախների պատմության համար։

«Սարդարապատ», 17 հունիսի, 1987
«Զարթոնք», 21 հունիսի, 1987

Արգենտինա

Արգենտինայի հանրապետության նախագահ դոկտ. Ռաուլ Ռիկարդո Ալֆոնսինը սեպտեմբերի 1-ին զրույց է ունեցել արգենտինահայերի հետ, որի ժամանակ ի միջի այլոց ասել է. «Լավ դիտեմ, որ ձեր հայրերը, ձեր մեծ հայրերը և թերևս նույնիսկ դուք, մեր երկիրը հասաք ցավալի դեպքերու հետևանքով, ամենադժվարին պայմաններու մեջ, զորս ժողովուրդ մը կրնա ապրիլ, ինչպիսին է 1915—1917-ի ցեղասպանությունը։ Հեռուստատեսությունն ու ռադիոն հաղորդումներ են տվել հանրապետության նախագահի այդ ելույթի մասին։

«Շարժում», 29 սեպտեմբերի, 1987
«Արև», 28 հոկտեմբերի, 1987

Բուենոս-Այրեսում իսպաներեն լեզվով լույս է տեսել Եղիշե Չարենցի հատընտիրը «Գիրք ճանապարհի» խորագրով։ Հատորը կազմել և իսպաներեն է թարգմանել Վարդան Մաթևոսյանը, որի նախաբանով էլ բացվում է գիրքը։ Ներկայացված է նաև Չարենցի ընդարձակ կենսամատենագիտությունը, ինչպես նաև բանաստեղծի գործերի իսպաներեն, պորտուգալերեն, ֆրանսերեն, անգլերեն և իտալերեն հրատարակությունների մատենագիտությունը։

«Շարժում», 30 սեպտեմբերի, 1987

Կանադա

Մոնրեալի Թեքեյան մշակութային միության վարչությունը հայտնել է, որ կազմակերպվել է «Տամատյան հիմնարկ», որի խնդիրն է ուսումնասիրել հայկական վավերագրերը և ստեղծել հետազոտություններ հայ ժողովրդի պատմության մասին։ Այս գործի մեջ պետք է ներգրավվեն հայագետներ և համապատասխան այլ մասնագետներ։

«Զարթոնք», 14 հունիսի, 1987

ՊՍՄՆ

Քեմբրիջի (Մասաչուսեթս) «Ջորյան հիմնարկը» 1984 թ. ձեռնարկել է հայկական ցեղասպանությանը վերաբերող վավերագրական և այլ նյութեր հավաքելու գործը միջազգային մասշտաբով։ Այդ աշխատանքի նպատակն է ի մի բերել, ցանկագրել և հրատարակել այն բոլոր վաստակաղիրներն ու վավերագրական նյութերը, որոնք վերաբերել են հայ ժողովրդի դեմ գործած ոճիրին։ Այժմ արդեն հավաքված է ավելի քան 100 000 փաստաթուղթ կամ դրանց միկրոժապավենները միջազգային կարևոր արխիվներից, ձայնագրված են 350 վերապրողների վրկայություններ։ Նախատեսվել է կազմել ցեղասպանության վերաբերյալ հրատարակված նյութերի առաջին մատենագիտությունը և հիմնել այդ նյութերի գրադարան։ Արդեն հավաքված են ավելի քան $00 լուսանկարներ։

«Արև», 4 փետրվարի, 1987
«Մասիս», 9 մայիսի, 1987

Սան Ֆրանցիսկոյում լույս է տեսնում հայ բանաստեղծությանը նվիրված անգլերեն տարեգիրք, որի նպատակն է «հետաքրքրություն ստեղծել հայ բանաստեղծության հանդեպ անգլիախոս երկրներու գրողներուն, բանասերներուն և առհասարակ հանրության մեջ»։

«Լրաբեր», 28 փետրվարի, 1987

«Լրաբերում» տպագրված մի հոդվածում խոսվում է Միացյալ Նահանգների մի շարք համալսարաններում գործող հայագիտական ամբիոնների մասին։ Թերթը կոչ է անում բարոյապես և նյութապես օժանդակել ամբիոններին, առավել ևս առաջադիմելու և զարգանալու համար։

«Լրաբեր», 2 մայիսի, 1987

Միչիգանի համալսարանը Ալեք և Մարի Մանուկյան հիմնարկությունից մեկ միլիոն դոլարի նվիրատվություն է ստացել երկրորդ հայագիտական ամբիոն հիմնելու համար։ Նոր ամբիոնը լինելու է սլավոնական լեզուների և գրականության բաժանմունքի կազմում։

«Մասիս», 30 մայիսի, 1987
«Լրաբեր», 13 հունիսի, 1987

Լույս է տեսել «Հայկական ցեղասպանությունը հեռանկարային առումով» գիրքը պրոֆ. Ռիչարդ Հովհաննիսյանի խմբագրությամբ, որը «Լրաբերի» մի քանի համարում ներկայացնում է Նուպար Ակիշյանը։ Ինչպես հայտնում է թերթը, հատորի հոդվածները գրված են գիտական լուրջ մակարդակով, պատմական տվյալների և արխիվային վավերագրերի հիման վրա։

«Լրաբեր», 2 մայիսի, 1987

Լույս է տեսել Դավիթ Անհաղթին նվիրված գիրք, որի խմբագիրն է Ավետիս Սանդյանը։ Ժողովածուն Մերձավոր Արևելյան ուսմանց կենտրոնի հրատարակած յոթերորդ հատորն է։ Հոդվածներից երկուսի հեղինակը Ա. Սանդյանն է. դրանցից մեկը վերաբերում է Դավիթ Անհաղթի կյանքին, երկերին և փիլիսոփայական ավանդին, երկրորդը՝ ուսումնասիրություն է «Սահմանք իմաստասիրության» աշխատության մեջ տեղ գտած բարոյագիտական հայացքների մասին։ Հատորին իրենց ուսումնասիրություններով մասնակցել են Ճորճ Նախնիքյանը՝ Ինդիանայի համալսարանից, Աբրահամ Թերեյանը՝ Միչիգանի էտրուդ համալսարանից, Ռոբերտ Թոմսոնը Հարվարդի համալսարանից, Հակոբ Ներսոյանը Օհայոյի համալսարանից և այլն։ Գիրքը պարունակում է նաև Երևանի Ալ. Մյասնիկյանի անվան գրադարանի կողմից Դավիթ Անհաղթի 1500-ամյակի կապակցությամբ լույս ընծայած ընդարձակ մատենագիտությունը և այդ նշանավոր տարեթվի կապակցությամբ տեղի ունեցած գիտաժողովի զեկուցումների լրիվ ցանկը։

«Արարատ», 11 հոկտեմբերի. 1987

Թեքեյան մշակութային միության Բոստոնի մասնաճյուղը կազմակերպել է գրական երեկո նվիրված Եղիշե Չարենցի ծննդյան 90-ամյակին, որի ավարտին տեղի է ունեցել գեղարվեստական միջոցառում։

«Ապագա», 2 նոյեմբերի, 1987

Դեկտեմբերի 10-ին Վաշինգտոնում, սովետական դեսպանատանը Ռ. Մ. Գորբաչովան հանդիպում ունեցավ Հայկական բարեգործական ընդհանուր միության ներկայացուցիչների հետ։ Ոչ միայն Միացյալ Նահանգներում, այլև ուրիշ երկրներում լայնորեն հայտնի այդ հասարակական կազմակերպության ղեկավարության անունից միության նախագահ Ա. Մանուկյանը մշակույթի սովետական ֆոնդի վարչության նախագահության անդամ Ռ. Մ. Գորբաչովային նվեր հանձնեց XVII դարի հին սլավոներեն մի ձեռագիր (Սողոյան ամուսինների նվերը) և 2. կ. Այվազովսկու մի գեղանկար (Շահինյան ամուսինների նվերը)։ Այդ ստեղծագործությունները պատմական և գեղարվեստական նշանակալից արժեք են ներկայացնում։

Ռ. Մ. Գորբաչովան մշակույթի սովետական ֆոնդի անունից ջերմորեն շնորհակալություն հայտնեց այդ հայրենասիրական արարքի համար։ Դա Սովետական Միության, սովետական մարդկանց հանդեպ տածած բարի զգացմունքների դրսևորումն է, այն նպատակների բարձրանումը, որ իր առջև դնում է մշակույթի սովետական ֆոնդը։ Այդ գեղարվեստական ստեղծագործությունները բարձր գնահատվեն սովետական հասարակության կողմից։

Հայկական բարեգործական ընդհանուր միությունը սերտ կապեր է պահպանում Սովետական Հայաստանի՝ որպես հայերի պատմական հայրենիքի և հայ մշակույթի կենտրոնի հետ։ Բարենպաստ են զարգանում մշակութային փոխանակումները սովետական հասարակական կազմակերպությունների հետ։

Նշվեց սովետական հայրենիքի հետ սփյուռքահայերի կապերի մեծ նշանակությունը։

(ՏԱՍՍ)

«Հայրենիքի ձայն», 16 դեկտեմբերի, 1987

Ճապոնիա

Տոկիոյում լույս է տեսել Նապուտ Սամոնի «Հայաստան երկիր մարդկային ծննդոց և աղետների» գիրքը։ «Նավասարդ» խմբագիր Արմեն Տոնոյանը և Ճապոնացի մի պրոֆեսոր նպատակ ունեն Տոկիոյում հիմնել հայ-ճապոնական մշակութային կապի կենտրոն տեղի «հայ փոքրաթիվ գաղութի մասնակցությամբ։

«Արև», 12 հունիսի, 1987

Կիպրոս

Նոյեմբերի 17-ին Նիկոզիայում բացվել է ֆոտոնկարների ցուցահանդես «Գենոցիդը Օսմանյան կայսրության պետական քաղաքականությունն էր» թեմայով։ Ցուցահանդեսը կազմակերպվել է բուլղարական «Սոֆիա-պրես» նորությունների գործակալության և Կիպրոսի մամուլի և ինֆորմացիայի բյուրոյի համատեղ ջանքերով։

«Кипрский бюллетень», հ. 10, № 19, 9. XI—30. XI, 1987

Ն. Վարդանյան (Դերոյան)